Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-094-18.11.2021-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39-րդ և 40-րդ կետերով.

«39) սահմանում է Երևանում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները:

40) սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ բացառությամբ տեղական տուրքերի կամ վճարների այն տեսակների, որոնց տրամադրման կարգը սահմանված է օրենքով կամ ՀՀ կառավարության որոշումներով:»:

Հոդված 2. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ի մասի 3-րդ կետում «սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, սաունա, բաղնիք և շոգեբաղնիք)» բառերը փոխարինել ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ի մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) Երևան քաղաքի տարածքում տալիս է հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություններ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39-րդ և 40-րդ կետերով.

«39) սահմանում է Երևանում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները:

40) սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ բացառությամբ տեղական տուրքերի կամ վճարների այն տեսակների, որոնց տրամադրման կարգը սահմանված է օրենքով կամ ՀՀ կառավարության որոշումներով:»:

Հոդված 2. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ի մասի 3-րդ կետում «սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, սաունա, բաղնիք և շոգեբաղնիք)» բառերը փոխարինել ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ի մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) Երևան քաղաքի տարածքում տալիս է հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություններ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 169[16]-րդ հոդվածի՝ ներկայումս գործող խմբագրության համաձայն՝ առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի դեպքում սահմանված է տուգանք նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով, ինչը էականորեն ցածր է, քանի որ պակաս է դրանց համար սահմանված տեղական տուրքերի չափից, օրինակ գերակշիռ մաս կազմող 1-ին և

2-րդ գոտիներում ներառված փողոցներում և տարածքներում գտնվող օբյեկտները ոգելից կամ ալկոհոլային խմիչքների համար վճարում են 1-ին գոտում ներառվածները՝ 17500 դրամից մինչև 175000 դրամ, 2-րդ գոտում ներառվածները՝ 10500-105000 դրամ, իսկ տուգանքի չափը սահմանված է 20000-50000 դրամ, ինչը հնարավորություն է ստեղծում գրեթե անպատիժ խուսափել տուրքերի վճարումից՝ տնտեսվարողի համար տուգանքի վճարումը ավելի ձեռնտու է: Միաժամանակ բացակայում է նաև կրկնակիությունը, ինչը պատիժը դարձնում է ոչ արդյունավետ: Էականորեն ցածր են նաև առանց թույլտվության՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների, խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի համար սահմանված տուգանքի չափերը: Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ վաճառքի համար տեղական տուրքի չափը Երևանում սահմանված է 600000 դրամ, իսկ տուգանքը 50000-100000, տեխնիկական հեղուկներինը՝ տուրքը 87500 դրամ է, տուգանքը՝ 20000-30000:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ տեղական տուրք է սահմանված համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, սակայն օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուգանք սահմանված է առանց թույլտվության ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացում իրականացնելու համար, այսինքն իրավակիրառ պրակտիկայում առաջանում են խնդիրներ և հակասություններ առանց թույլտվության ալկոհոլային խմիչքների վաճառքի համար վարչական տույժ նշանակելու դեպքում:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ տեղական տուրք է սահմանված համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, սակայն օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տուգանք սահմանված է առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելու համար: Այս դեպքում նույնպես վարչական մարմնի կողմից հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում առանց թույլտվության տեխնիկական հեղուկների վաճառքի փաստի առթիվ տուգանք նշանակելու դեպքում հակասություններ են առաջանում, իսկ տնտեսվարողները շարունակում են առանց թույլտվության գործունեություն ծավալել:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ տեղական տուրք է սահմանված համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, սակայն այն չվճարելու դեպքում պատժամիջոց սահմանված չէ, ինչը գործնականում դրա գանձումը դարձնում է անհնարին:

Կրկնակիությունը բացակայում է նաև առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման դեպքում, ինչը պատիժը դարձնում է ոչ արդյունավետ:

Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն իրականացնող տնտեսվարողները հաճախ գործունեությունն իրականացնում են առանց թույլտվության կամ էսքիզային առաջարկի խախտումներով՝ խոչընդոտելով հետիոտնի ազատ տեղաշարժին, ինչի համար պատժամիջոց նույնպես սահմանված չէ, ինչը որպես առանձին իրավախախտման տեսակ սահմանված չէ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՎԻՎ օրենսգրքի 158-րդ հոդվածի 35-րդ մասով կատարվել է լրացում հետևյալ բովանդակությամբ.

«Սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին չհամապատասխանող առևտուր և (կամ) հանրային սննդի ծառայություն իրականացնելը՝առաջացնում է խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում և տուգանքի նշանակում պաշտոնատար անձի, կազմակերպչի (պատասխանատու անձի) նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:»:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2018 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունված ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՎԻՎ օրենսգրքի 158-րդ հոդվածի 35-38-րդ մասերով կատարվել է լրացում հետևյալ բովանդակությամբ.

«Առանց համայնքի ղեկավարի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի թույլտվության սահմանափակման ենթակա ծառայության ոլորտում (կարաոկե, դիսկոտեկ, բաղնիք, սաունա կամ շոգեբաղնիք) գործունեություն իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Առանց համայնքի ղեկավարի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի թույլտվության սահմանափակման ենթակա ծառայության ոլորտում (հեստապարային ակումբի) գործունեություն իրականացնելը՝առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 35-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 36-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարերեքհարյուրապատիկի չափով:»:

Օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, 113-րդ, 124.7-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, 152.2-րդ հոդվածի 1-ին մասով, 156-րդ, 157-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.15-րդ, 158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ մասերի), 162-րդ, 169.14-րդ հոդվածի 4-րդ մասով, 180-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 169.16-րդ, 189.11-րդ, 189.12-րդ և 189.18-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, իսկ 238[2]-րդ հոդվածի համաձայն՝ սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող պետական լիազորված մարմինը քննում է սույն սույն օրենսգրքի 158-րդ

հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ, հինգերորդ, վեցերորդ, տասնմեկերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, քսանհինգերորդ, քսանութերորդ, քսանիններորդ, երեսուներորդ և երեսունհինգերորդ մասերով, 182^2 և 188 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսգրքում տարբեր նորմատիվ իրավական ակտերով 158-րդ հոդվածի 35-րդ մասով կատարվել են լրացումներ: Միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների կողմից սահմանափակման ենթակա ծառայության ոլորտում հսկողություն իրականացնելու և առանց թույլտվության գործունեություն ծավալելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու դեպքում անհրաժեշտ է համայնքի ղեկավարի կողմից տրված հանձնարարագիր, ինչը կարող է լրացուցիչ դժվարություններ առաջացնել տեսուչների համար, քանի որ սահմանափակման ենթակա օբյեկտները հիմնականում աշխատում են ոչ աշխատանքային ժամերին՝ երեկոյան ժամերից մինչև ուշ գիշեր, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու համար պատժամիջոցները սահմանված են օրենսգրքի 169^{16}-րդ հոդվածով, ուստի առաջարկվում է օրենսգրքի 158-րդ հոդվածի 35-38-րդ մասերը ավելացնել 169^{16}-րդ հոդվածում:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17^1-րդ հոդվածի 14-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է չխոչընդոտել հսկողության իրականացման աշխատանքների ընթացքին, սակայն շատ հաճախ տնտեսվարողները կամ նրանց փոխարինողները խոչընդոտում են հսկողության ընթացքին կամ ընդհանրապես տեսուչներին չեն թողնում մուտք գործել օբյեկտ, ինչի հետևանքով տեսուչները չեն կարողանում իրականացնել իրենց օրինական գործողությունները,իսկ տնտեսվարողները շարունակում են աշխատել օրենքի պահանջների խախտմամբ՝ մնալով անպատիժ:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ սպառողն իրավունք ունի փոխարինելու կամ վերադարձնելու պատշաճ որակի ապրանքն իրեն հանձնելու օրվանից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Պատշաճ որակի ապրանքը վերադարձնելու ժամկետը համարվում է պահպանված, եթե սպառողն ապրանքն ստանալու օրվանից 14-օրյա ժամկետում այն հանձնել է փոստային, սուրհանդակային, տրանսպորտային կամ առաքման այլ ծառայության, սակայն կատարված ուսումնասիրությունները և քաղաքացիների կողմից ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ տնտեսվարողների կողմից չի պահպանվում նշված իրավանորմի պահանջները՝ շատ հաճախ անգամ առևտրի օբյեկտներում փակցվում են հայտարարություններ վաճառված ապրանքը հետ չվերցնելու և չփոխարինելու վերաբերյալ՝ կոպիտ խախտելով սպառողների շահերն ու իրավունքները: Միաժամանակ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել օրենսգրքի 219^1-րդ հոդվածում, որով սահմանված են այն հոդվածները որոնց քննումը իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալ՝ նախագծերով նախատեսվել է կարգավորել ՎԻՎ օրենսգրքի 158-րդ և 169^{16}-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ տեղական տուրքերի գանձման արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև բնակիչների և սպառողների իրավունքների պաշտպանությունը առևտրի և սպասարկումների ոլորտում ապահովելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջին տարիներին բացօթյա սեզոնային սրճարանները Երևան քաղաքի համար յուրօրինակ միջավայր են դարձել, որտեղ հավաքվում են բազմաթիվ

քաղաքացիներ, մտավորականներ ինչպես նաև զբոսաշրջիկներ: Բացօթյա սրճարանները դարձել են Երևան քաղաքի այցեքարտը և յուրատեսակ խորհրդանիշը, սակայն հանրային սննդի սեզոնային ծառայության համար առկա չեն օրենսդրական համապատասխան կարգավորումներ: Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է բացօթյա հանրային սննդի ծառայությունը կազմակերպել երկու սեզոնով՝ ամառային և ձմեռային, քանի որ շատ սրճարաններ ցանկանում են ձմռանը նույնպես աշխատել, ինչը նոր խթան է հանդիսանում Երևանում զբոսաշրջության զարգացման ներկայիս փուլում, ինչպես նաև կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր:

««Երևան քաղաքում տեղական ինքնակավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Տեղական ինքնակավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, վերոնշյալ ոլորտը կանոնակարգելու նպատակ է հետապնդում, ուստի նախատեսվում է սահմանել սույն իրավահարաբերությունները կարգավորող նորմեր:

Մայրաքաղաքում և ՀՀ մյուս համայնքներում տարիներ շարունակ իրականացվում է բացօթյա ապօրինի առևտուր: Համայնքապետարանների աշխատակիցները պայքարում են իրականացվող բացօթյա ապօրինի առևտրի դեմ, սակայն ապօրինի առևտուրը մասամբ արգելվում է, բայց ի սպառ չի վերացվում և խնդիրը լուծում չի ստանում: Բացօթյա ապօրինի առևտուրը բերում է բազմաթիվ բացասական հետևանքներ: Առաջին հերթին բացօթյա ապօրինի առևտուրը վտանգում է սպառողների առողջությունը: Արևի, անձրևի ու ձյան ազդեցության, փոշու և մեքենաների արտանետումների հետևանքով գյուղատնտեսական մթերքները արագ որակազրկվում են, քիմիական պրոցեսների հետևանքով դրանցում առաջանում են թունավոր նյութեր և սպառնում բնակչության առողջությանը: Արձանագրվում են թունավորման բազմաթիվ դեպքեր, որոնք առաջացել են փողոցներից գյուղմթերք, կաթնամթերք, մսամթերք, ձկնեղեն գնելու և սպառելու հետևանքով: Բացօթյա ապօրինի առևտուրը առաջացնում է նաև փողոցներում հակասանիտարական վիճակ, խոչընդոտում հետիոտնի և տրանսպորտի երթևեկին, երբեմն ստեղծում ճանապարհատրասպորտային պատահարների դեպքեր: Առևտրի գործունեությունից առաջացած աղմուկի հետևանքով խանգարվում է մարդկանց հանգիստն ու անդորրը՝ առաջացնելով նրանց շրջանում դժգոհություններ: Առևտուր իրականացնելու համար անհրաժեշտ զանազան պարագաների տեղադրման հետևանքով աղճատվում է նաև մայրաքաղաքի տեսքը՝ ստեղծելով գեղագիտական տեսանկյունից ոչ հաճելի պատկեր: Վարչական տուգանքի ցածր չափը ձեռնտու է լինում բացօթյա ապօրինի առևտրով զբաղվող անձանց համար և դա կարծես չի խանգարում նրանց գործունեության իրականացմանը, ինչի արդյունքում բացօթյա ապօրինի առևտրի դեմ պայքարի արդյունավետությունը շատ ցածր է լինում, ուստի դրա դեմ պայքարի արդյունավետությունը մեծացնելու, ինչպես նաև սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց վերը նշված բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով առաջարկվել է ոչ սահմանված տեղում առևտուր անելու տուգանքի չափը մեծացնել:

Նախագծերը չեն առնչվում Հայաստանի վերափոխման ռազմավարության 2050, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրի, ոլորտային և/կամ այլ ռազմավարությունների հետ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-094-18.11.2021-ՏՏԳՇ-011/1, Կ-094[1]-18.11.2021-ՏՏԳՇ-011/1, Կ-094[2]-18.11.2021-ՏՏԳՇ-011/1, Կ-094[3]-18.11.2021-ՏՏԳՇ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Երեվան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»օրենքի նախագծի Վերնագրում և 1-ին հոդվածում	Առաջարկում ենք «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի Նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը, ինչպես նաեւ Նախագծի 1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է, նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

2	ՀՀ կառավարություն	«Երեվան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և ««Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածում կատարել լրացում	Նախագծի 1-ին հոդվածով «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է Երեւան քաղաքի ավագանու լիազորությունների շրջանակում լրացնել Երեւան քաղաքի ավագանու կողմից «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրման կարգի սահմանումը: Մինչդեռ, հարկ է նկատել, որ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված մի շարք թույլտվությունների տրման կարգերը օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են Կառավարության կողմից: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի եւ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներում սահմանել «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրման կարգերի ընդունման նախատեսվող ժամկետները:	Ընդունվել է, նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	««Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի հոդված 2-ում կատարել փոփոխություն	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում արդեն իսկ առկա է 12-րդ կետ՝ առաջարկում ենք «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված լրացումը կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխանաբար 13-րդ կետով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
4	ՀՀ կառավարություն	««Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածում կատարել փոփոխություն	«Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված է «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 23-րդ եւ 24-րդ կետերով՝ սահմանելով տեղական տուրքի նոր տեսակներ: Առաջարկում ենք «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանվող տեղական տուրքերի գործողության ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

5	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում կատարել փոփոխություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, ըստ որի՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
6	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում կատարել փոփոխություն	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաեւ այդ բառի հոգնակիի վրա եւ ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից»: Առաջարկում ենք վերանայել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածում լրացվող 36-րդ մասում տեսուչների բառի հոգնակի թվով կիրառմանը զուգահեռ փակագծերում եզակի թվի մասին նշում կատարելու դեպքերը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
7	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում կատարել փոփոխություն և 158-րդ հոդվաի վերնագիրը շարադրել նոր	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխության արդյունքում Օրենսգրքի 158-րդ հոդվածի 36-րդ եւ 37-րդ մասերը նոր խմբագրությամբ են շարադրվում, ինչի արդյունքում Օրենսգրքի 158-րդ հոդվածի 36-րդ եւ 37-րդ մասերով նախատեսված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված պահանջները խախտելուն վերաբերող կարգավորումները լրացվում են Օրենսգրքի 169.16-րդ հոդվածում: Նշված	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է

		խմբագրությամբ	փոփոխության արդյունքում Օրենսգրքի 158-րդ հոդվածի վերնագրում նշված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտին վերաբերող կարգավորումները բացակայում են նույն հոդվածի բովանդակությունից: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ առաջարկում ենք Օրենսգրքի 158-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել նույն հոդվածի բովանդակությանը:		
8	ՀՀ կառավարություն	Հիմնավորման լրամշակում	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքի 162-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում ոչ սահմանված տեղերում առեւտուր իրականացնելու համար նախատեսված տուգանքի չափը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ յոթանասունապատիկի չափով բարձրացվում է նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով: Մինչդեռ նշենք, որ Նախագծերի փաթեթին կից որեւէ հիմնավորում նախատեսված չէ նշված տուգանքի չափի բարձրացման անհրաժեշտության վերաբերյալ:	Ընդունվել է, նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը լրամշակվել է:	Ընդունվել է
9	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում կատարել փոփոխություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված Օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսվում առանց թույլտվության հեղուկ վառելիքի, սեղմված բնական եւ (կամ) հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական եւ (կամ) հեղուկացված նավթային գազերի վաճառք իրականացնելու համար: Հարկ է նկատել, որ Օրենսգրքի 169.16-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում առանց թույլտվության ածխաջրածնային գազերի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի եւ (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի համար սահմանված պատասխանատվությանը վերաբերող դրույթները դուրս են մնում կարգավորումից:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է,

10	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում կատարել փոփոխություն և 169,16-րդ հոդվաի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ	12. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքի 169.16-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում անհրաժեշտ է նշել նաեւ նոր խմբագրությամբ շարադրվող հոդվածի վերնագիրը:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է,
11	ՀՀ կառավարություն	««Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածում կատարել փոփոխություն	Նախատեսվում է նախագծերն ուժի մեջ մտցնել պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: Այս կապակցությամբ առաջարկում ենք վերանայել Փաթեթն ուժի մեջ մտցնելու ժամկետը՝ այն համապատասխանեցնելով Հարկային օրենսգրքի պահանջներին:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է,